ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 օգոստոսի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

118
(2598)

քՐ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 66

Նախքան Հայաստանն աշխարհին կներկայանար ու կզարմացներ Դիլիջանի միջազգային դպրոցով, ընդդիմադիր պատգամավոր Նիկոլ Փաշինյանը 2013-ի հոկտեմբերի 19-ին Ազգային ժողովի ամբիոնից ի լուր աշխարհի օրվա իշխանությանը՝ Հանրապետականին, հռետորական հարց էր տալիս. «Ինչո՞ւ է իշխանությունն ափալ-թափալ շահել Ռուբեն Վարդանյանի սիրտը: Դպրոցի համար օրենքի նման նախագիծ ընդունելով՝ փաստացի կանաչ լույս եք վառում «գցողների» համար: Իսկ այդ օրինագծի շրջանակներում գործարարին հարկային ու մաքսային արտոնություններ տրամադրելու վերաբերյալ իշխանության ներկայացուցիչների արած մեկնաբանություններն ու ունեցած ելույթները գոնե ինձ ստիպում են մտածել, որ այս նախագիծն ուղղակի առնչություն ունի վերջերս ծագած ու բոլորիդ լավ հայտնի օվշորային սկանդալի հետ»: 2018-ին, սակայն, արդեն վարչապետի աթոռը զբաղեցնող Փաշինյանն ուրախ էր, որ «Հայաստանում Դիլիջանի միջազգային դպրոցի նման դպրոց կա»: Իշխանափոխությունից անմիջապես հետո՝ 2018-ի մայիսի 26-ին, հայտարարում էր. «Սա ապագա Հայաստանի խորհրդանիշն է, որը լինելու է սիրո եւ համերաշխության, բարձր մակարդակի կրթություն ապահովող պետություն: Գյումրիից մեկնարկած քայլերի ընթացքում ես անցել եմ այստեղով, տխուր էի՝ տեսնելով այս վայրի եւ շրջապատող տարածքների տարբերությունը: Բայց հիմա հասկացա, որ այս դպրոցը կարող է լինել ոգեշնչանքի, էնտուզիազմի, լավատեսության կենտրոն Դիլիջանի բնակիչների կամ նրանց համար, ովքեր կանցնեն այստեղով»: Փաշինյանի՝ այս անգամ միջազգային կրթական ծրագրի ու դիլիջանյան դպրոցի մասին արած հակասական հերթական հայտարարությունը, փաստորեն, սուտ է եղել:



Օգոստոսի 5-ին «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ, ՀՀ ԱԳ նախկին նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանն օգոստոսի 5-ին հրավիրած ասուլիսում հրապարակեց ազգային վստահության խորհրդի ցուցակը, որը կազմել է ինքը. Արման Թաթոյան, Արկադի Կարապետյան, Վազգեն Մանուկյան, Ավետիք Չալաբյան, Պարույր Հայրիկյան, Ռուբեն Վարդանյան, Գեւորգ Գեւորգյան, Լիլիթ Գալստյան, Միհր Գրիգորյան, Համբարձում Մաթեւոսյան, Աննա Գրիգորյան, Արմեն Դարբինյան, Վահան Արծրունի, Գագիկ Գինոսյան, Բագրատ Սրբազան Գալստանյան՝ թվարկեց Ռաֆֆի Հովհաննիսյանը եւ հավելեց՝ նմանատիպ այլ ցուցակներ եւս կան: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ փոխվարչապետներ Միհր Գրիգորյանին եւ Համբարձում Մաթեւոսյանին՝ փորձելով պարզել, թե ինչ են մտածում հրապարակված ցուցակի շուրջ: ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանի մամուլի քարտուղար Լուսինե Մարտիրոսյանը նշեց, թե մեկնաբանության անհրաժեշտություն չեն տեսնում: Իսկ, ահա, Միհր Գրիգորյանի աշխատակազմից խոստացան պատասխանել, սակայն մինչեւ օրվա ավարտ այդպես էլ պատասխան չեղավ: Հավելենք, որ այս ցուցակում ընդգրկված իշխանական կառավարության մաս կազմող անունները շատերի զարմանքն էր առաջացրել: Լրագրողներն ասուլիսի ժամանակ հետաքրքրվել էին՝ ինչպես կարելի է հասկանալ այն, որ հրապարակված ցուցակում ընդգրկված են անուններ, որոնք այսօր ներկայացնում են իշխանությունը, որոնց Ռաֆֆի Հովհաննիսյանը մեղադրում է ՀՀ ինքնիշխանությունը վտանգելու համար: Ի պատասխան՝ Ռաֆֆի Հովհաննիսյանը նշեց. «Սա արտակարգ մեթոդաբանություն է՝ լուծում տալու այսօրվա ահավոր վտանգավոր վիճակին»:

Արցախի Հանրապետության 3 բնակավայրերի՝ Աղավնո, Բերձոր եւ Սուս համայնքների բնակիչները մինչեւ օգոստոսի 25-ը պետք է ազատեն իրենց հայրենի բնակարանները: Հիմնավորումն այն է, որ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո, որը կնքվել էր ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի միջեւ, երբ արցախաադրբեջանական սահմանին տեղակայվեցին ռուս խաղաղապահներ, արդեն պարզ էր, որ այս տարածքները եւս պիտի հանձնվեն: Այսինքն՝ այս տարածքները լքելու մասին հայտնի է դարձել դեռ մոտ երկու տարի առաջ, սակայն այս ընթացքում Աղավնոյում կատարվել են մեծ թվով ներդրումներ, դպրոց, մանկապարտեզ է վերակառուցվել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ խոսքը մոտ 300 հազար ԱՄՆ դոլար ներդրման մասին է ոչ պետական միջոցներից: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Աղավնոյի գյուղապետ Անդրանիկ Չավուշյանը հաստատեց մեր այն տեղեկությունները, որ այս ընթացքում գյուղում տարբեր ներդրումներ են արվել, սակայն կոնկրետ գումարի չափ այդպես էլ չնշեց: «Պատերազմից հետո պետական մակարդակով չեն արել, ասել են՝ հանձնելու ենք: Անգամ Հայկ Մարությանը եկավ, ներկայացրեցի՝ ինչ է պետք, բայց գնաց ու գնաց: Դպրոց, մանկապարտեզ կամ այլ հարցերի դեպքում օգնել են ընկերները, ամերիկահայերը, պետական աջակցություն չի եղել»,- մանրամասնեց դաշնակցական գյուղապետը: Ստացվում է՝ իմանալով անգամ, որ Աղավնոյից պետք է բնակիչները հեռանան, այնտեղ ներդրումներ են արվել, մինչդեռ դրա փոխարեն այդ միջոցները կարելի էր ուղղել Արցախում այլ քաղաքների բարեկարգման վրա՝ զուր չխաղալով մարդկանց հույզերի հետ:

«Վեոլիա ջուր» ընկերությունն առաջարկում է ջրի սակագինը այս տարի էլի բարձրացնել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ընկերությունն օգոստոսի 8-ին հայտ է ներկայացրել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով եւ առաջարկել է ջրի մատակարարման ու ջրահեռացման սակագինը գործող 200 դրամի փոխարեն սահմանել 209 դրամ՝ 1 խմ-ի համար: Թե ինչ որոշում կկայացնի հանձնաժողովը, այս պահին հայտնի չէ, ուսումնասիրում է առաջարկը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ջրի վերջնական սակագինը հայտնի կլինի մինչեւ այս տարվա նոյեմբերի 15-ը: Եթե այն փոփոխվի, ապա թանկացած ջրի համար բնակիչները կսկսեն վճարել 2023 թվականի հունվարի 1-ից: Իսկ ո՞րն է հիմնավորումը, որ մի քանի միլիոն դրամ աշխատավարձ ստացող «Վեոլիա ջուր» ընկերության տնօրեն Մարիաննա Շահինյանն իր բարձր աշխատավարձ ստացող նախկին համակուրսեցիների հետ ներկայացրել է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ՝ նրանք գրել են, թե այս տարվա առաջին կիսամյակի ընթացքում սղաճ ունեն: Այսինքն՝ ընկերության ղեկավար կազմի աշխատավարձը, որ սկսվում է մոտ 3 մլն դրամից, պետք է պահպանվի, տնօրենն ու նրա կուրսեցիները պետք է խելահեղ պարգեւավճարներ իրենք իրենց գրեն ու ստանան, բայց ընկերության սղաճը պիտի բնակիչը լրացնի: Հիշեցնենք՝ ջրի սակագինը ՀՀ-ում բարձրացել էր այս տարվա հունվարի 1-ին՝ դառնալով 200,47 դրամ՝ գործող 180 դրամի փոխարեն: Հիմա ընկերությունն առաջարկում է այն բարձրացնել 9 դրամով: Ջրի սակագնի բարձրացման այս լուրը խիստ զայրացրել է մեր քաղաքացիներին: Հայտնի է, որ այս ընկերությունը վատ է կազմակերպում իր աշխատանքը, եւ հարյուրավոր քաղաքացիներ դժգոհ են մատուցած անորակ ծառայություններից: Այս մասին են խոսում նաեւ ՀՀ հանրային ծառայություններ ստացված դիմում-բողոքները: Այսպես, տարեսկզբից մինչ հուլիս (հուլիս ամիսը ներառյալ) «Վեոլիա ջուր» ընկերության հետ կապված սպառողներից ստացվել է 240 գրավոր դիմում-բողոք, 423՝ բանավոր: Նշենք, որ միայն ջրամատակարարման գրաֆիկի հետ կապված գրավոր դիմում-բողոքները 54-ն են, իսկ 153-ը՝ բանավոր:

ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ

ԴԱՎԱԴԻՐ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Բերձորն ու հարակից եւս երկու գյուղ առաջիկայում Ադրբեջանին կհանձնվեն: Բնակիչներն արդեն սկսել են հանել իրենց գույքը: Հասարակությունն այս ամենին հետեւում է լուռ, առանց որեւէ բայլ ձեռնարկելու: Թե՛ իշխանությունը, թե՛ ընդդիմությունը որեւէ բայլ չեն ձեռնարկում այս մասով: Թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար Քրիստինե Վարդանյանի հետ:

-Արցախի Աղավնո ու Բերձոր համայնքները, փաստորեն, առանց որեւէ արգելքի, անցնելու են Ադրբեջանին: Իշխանությունը, ընդդիմությունն ու հասարակությունն առհասարակ, բացի մեկը մյուսին քննադատելուց, այլ քայլեր չեն անում կամ գուցե անում են, պարզապես այդ մասին չեն բարձրաձայնում: Կա՞ նման գործընթաց:

-Նախ կարծում եմ՝ անթույլատրելի է ընթացող գործընթացներում փաստացի իշխանության եւ որեւէ այլ սուբյեկտի ունեցած պատասխանատվության եւ մեղավորության հավասարեցումը: Մենք պետք է հստակ արձանագրենք, որ ՀՀ փաստացի իշխանությունները եւ անձամբ Նիկոլ Փաշինյանը ոչ թե որեւէ բան չեն անում իրավիճակը շտկելու համար, այլ հերթական դավադիր պայմանավորվածության արդյունքում սեփական ժողովրդին կանգնեցնում են փաստի առջեւ:

Ինչ վերաբերում է քաղաքական եւ այլ դերակատարներին, վստահ եմ, որ այս օրերին ազգային մտածողություն ունեցող ցանկացածն ուժերի ներածին չափով փորձում է օգնել: Այո, կարող է այնպես լինել, որ իրականացվող աշխատանքների մի մասը նաեւ լինի ոչ հրապարակային. ամեն արվածի մասին չէ, որ հարկավոր է գոռալ:

-Հայտնի է, որ Աղավնո գյուղը վերակառուցվել էր սփյուռքի մեր հայրենակիցների կողմից, հատկապես գործուն դերակատարում են ունեցել դաշնակցականները՝ դեռ չասած, որ գյուղապետն ինքն էլ դաշնակցական շրջանակներից է: Այս իմաստով ակնկալիքները ՀՅԴ-ից շատ ավելին էին կամ են: Ի դեպ, գյուղապետը մինչեւ վերջին պահը վստահեցնում էր, թե գյուղից, ինչ էլ լինի, դուրս չեն գալու՝ մահ կամ ազատություն սկզբունքով:

-Այո, ՀՅԴ գործուն ջանքերով եւ ներդրումներով գյուղը վերակառուցվել եւ վրաբնակեցվել է: Արցախյան ազատամարտից հետո ազատագրված տարածքները եղել են մեր հատուկ ուշադրության կենտրոնում: Չեմ կարծում, որ կա որեւէ բան, որը կարող էր անել իշխանության չգտնվող ուժը Աղավնոյի համար, որը մենք չենք արել: Այստեղ բոլորս խնդիր ունենք գիտակցելու, որ երբ դավադիր պայմանավորվածությամբ հանձնվում է այս կամ այն տարածքը, մեղավորներ պետք է փնտրել պայմանավորվածություն ձեռք բերողների մեջ, ոչ թե մեղադրել բոլորին, բացի հանձնողներից:

Ինչ վերաբերում է Աղավնոյի դաշնակցական գյուղապետին, վստահ եմ, որ նրա՝ առանց չափազանցնելու հերոսական դիմադրությունը դեռ օրինակ է լինելու եւ ոգեւորելու է շատերին: Անդրանիկ Չավուշյանը պետք է բոլորիս, նա այս անհույս ու անլույս թվացող օրերի սակավաթիվ հույսի ճրագներից է, որը արել եւ շարունակում է անձնազոհաբար անել ամեն ինչ Աղավնոյի համար: Անընդունելի եմ համարում այս համատեքստում նրան որեւէ կերպ թիրախավորելը կամ ակնարկելն անգամ, որ ինքը կարող էր ավելին անել, բայց չի արել:

-Անգամ եթե մտածենք, թե Հայաստանն իր ռազմական արսենալով չէր կարող պայքարել երկու բնակավայրերի պաշտպանության ու պահպանության համար, այդուհանդերձ ո՞ւր մնաց դիվանագիտությունը, որ կարող էին ու պետք է բանեցնեին թե՛ իշխանավորները, թե՛ ընդդիմադիրները:

-Կրկնում եմ՝ անընդունելի է այս համատեքստում փաստացի իշխանությունների եւ որեւէ այլ սուբյեկտի դերակատարության եւ մեղավորության համեմատումն անգամ: Ի տարբերություն փաստացի իշխանության ներկայացուցիչների՝ ընդդիմադիրներն այս ողջ ընթացքում ջանքեր չեն խնայել բոլոր հնարավոր հարթակներում բարձրաձայնելու Արցախի հայաթափմանն ուղղված գործողությունները եւ թշնամիների հայատյաց եւ ֆաշիստական քաղաքականության դրսեւորումները: Դրանց բոլորին ի պատասխան՝ փաստացի իշխանությունների կողմից մշտապես հնչում են հավաստիացումներ, որ երկու ժողովուրդների միջեւ համակեցությունը հնարավոր է, եւ որեւէ վտանգ այդտեղ իրենք չեն տեսնում:

-Ի՞նչ անել, որ ՀՀ ու Արցախի մյուս բնակավայրերը հանկարծ նույն ճակատագրին չարժանան, չմասնատվի մեր բռաչափ երկիրը:

-Երկրում իրականացնել իշխանափոխություն:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓԱՐԱՄԱԶՅԱՆԸ ԿԱՌԱՔԱԴՐՎԻ

Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանը սեպտեմբերին կայանալիք Քաջարան համայնքի ավագանու համամասնական ընտրություններին առաջադրվելու է քաղաքական Սուրեն Սուրենյանցի «Դեմոկրատական այլընտրանք» եւ Նորայր Նորիկյանի «Արդարություն» կուսակցությունների կազմած դաշինքով, որը կանվանվի «Դեղի միասնություն»:

Ինչպես հայտնի է, նա ամիսներ առաջ իր դիմումի համաձայն դուրս էր եկել Վահե Հակոբյանի «Վերածնվող Հայաստան» կուսակցությունից: Ի դեպ, այդ մասին հայտնի դարձավ այն բանից հետո, երբ ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանն այցելել էր Քաջարան, իսկ Փարամազյանն էլ նրան ծաղիկներ էր նվիրել:

Թե ինչու էր Փարամազյանը դուրս եկել Վահե Հակոբյանի կուսակցությունից, մանրամասներ հայտնի չդարձան: Հայտնի է, որ Մանվել Փարամազյանի՝ «Վերածնվող Հայաստան» կուսակցության անդամակցությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումը կայացվել է դեռ մայիսի սկզբին: Հունիսի վերջին տեղի ունեցած արտահերթ համագումարի արդյունքում դադարեցման որոշումն ի կատար է ածվել՝ թե՛ որպես վարչության անդամ, թե՛ որպես կուսակցության անդամ առհասարակ:

Հավելենք, որ մինչեւ Վահե Հակոբյանի կուսակից լինելը Մանվել Փարամազյան անցնում էր քրեական գործով. նրան մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասով (Խարդախությունը), 311-րդ հոդվածի 4-րդ մասով (Կաշառք ստանալը) եւ 154.2-րդ հոդվածի 2-րդ մասով (Ընտրողներին կաշառք տալը, կաշառք ստանալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը): Այս պահին նա ազատության մեջ է:

ՕԴԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ ԿԲԱՐՁՐԱՆԱ

Օգոստոսի 11-16-ն օդի ջերմաստիճանը կբարձրանա այսօրվա համեմատ 6-8 աստիճանով: Այս նորությունը հանրության կողմից մեծ տհաճությամբ ընդունվեց: Պարզվում է՝ Արարատյան դաշտում, Արագածոտնի, Վայոց ձորի նախալեռնային գոտիներում եւ Երեւանում օգոստոսի 15-19-ի ցերեկային ժամերին օդի ջերմաստիճանը կհասնի +40... +42 աստիճանի: Հաշվի առնելով սա՝ տեղեկացնենք, որ աշխատավայրում +40 աստիճան ցելսիուսից բարձր ջերմաստիճանային պայմաններում, երբ հնարավոր չէ ապահովել պատշաճ ջերմաստիճանային ռեժիմ, աշխատանքային օրվա ընթացքում աշխատողներին պետք է տրամադրել հատուկ ընդմիջումներ՝ հովանալու եւ հանգստանալու համար: Բացի այս, աշխատավայրում պետք է ապահովվի թույլատրելի ջերմաստիճանային պայմաններով հանգստի վայրեր: Նաեւ հաշվի առնելով աշխատանքային պայմանները՝ աշխատողներին պետք է ապահովել նաեւ անհատական պաշտպանության միջոցներով՝ գլխարկներ, բաց գույնի արտահագուստ, հովանոցներ, արեւային ակնոցներ: Ի դեպ, տեղեկացնենք, որ ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 153 հոդվածի՝ հաշվի առնելով աշխատանքի պայմանները՝ մինչեւ 18 տարեկան աշխատողներին, որոնց աշխատաժամանակի տեւողությունը գերազանցում է 4 ժամը, աշխատաժամանակի ընթացքում պետք է տրվի հանգստի համար լրացուցիչ ընդմիջում՝ նվազագույնը 30 րոպե: Ի դեպ, հատուկ ընդմիջումներ պետք է տրամադրվեն նաեւ, եթե աշխատանքը կատարվում է պլյուս 40 աստիճան ցելսիուսից բարձր կամ մինուս 10 աստիճան ցելսիուսից ցածր օդի ջերմաստիճանային պայմաններում, ինչպես նաեւ ծանր ֆիզիկական կամ մտավոր եւ հուզական գերլարված բնույթ կրող կամ առողջության համար բացասական ներգործություն ունեցող վտանգավոր այլ պայմաններում:

ԱՌԱՔԱՏԱՐՆ Է

«Լրագրողներ առանց սահմանների» (RSF) ազդեցիկ միջազգային ոչ կառավարական կազմակերպությունը, որի առաքելությունն է ամբողջ աշխարհում ՁԼՄ-ների ազատությունը, լրագրողների եւ օգտատերերի պաշտպանությունը, հրապարակել է «Աշխարհում մամուլի ազատության ինդեքս» (World Press Freedom Index) տարեկան զեկույցը: Այս տարի լավագույն ցուցանիշն արձանագրել է Նորվեգիան, որին հաջորդում են Դանիան, Շվեդիան, Էստոնիան, Ֆինլանդիան, Իռլանդիան, Պորտուգալիան, Կոստա Ռիկան, Լիտվան, Լիխտենշտեյնը: Մինչդեռ վարկանիշային աղյուսակը եզրափակում է հետեւյալ տասնյակը՝ Սիրիա, Իրաք, Կուբա, Վիետնամ, Չինաստան, Մյանմար, Թուրքմենստան, Իրան, Էրիթրեա, Հյուսիսային Կորեա: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այն 68.97 միավորով 51-րդ տեղում է՝ առաջ անցնելով տարածաշրջանի բոլոր երկրներից:

«Չնայած բազմակարծության միջավայրին՝ լրատվամիջոցները շարունակում են բեւեռացված մնալ: Երկիրը բախվում է ապատեղեկատվության եւ ատելության խոսքի աննախադեպ մակարդակի, հատկապես՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ Լեռնային Ղարաբաղի տարածքային վեճի առնչությամբ», - Հայաստանի վերաբերյալ գրել են զեկույցի հեղինակները:

ԻՐԱՎԻՃԱԿ

«ՎԵՌԼԻԱ ՋՈՒՐ»-Ն ՈՒ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Շահեն Ղուկասյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Վեռլիա ջուր» ՓԲԸ-ի Երեւանի տարածքային թիվ 5 տեղամասի մասնագետ-տեսուչ, ուրիշի գույքի խոշոր չափերի հափշտակություն կատարելու մեկ միասնական դիտավորությամբ 2019 թվականի հունվար ամսից մինչեւ 2019թ. նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում՝ գործով չպարզված ամիսներին եւ օրերին, իր կողմից սպասարկվող Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տարածքում յուրացման եղանակով հափշտակել է իրեն վստահված խոշոր չափերի՝ 1.998.801.07 ՀՀ դրամ գումարը:

Այս գործով դատարանը կայացրել է որոշում եւ Շահեն Ղուկասյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցանք կատարելու համար եւ նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ տուգանք՝800.000 /ութ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով՝ առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու:

Դիմում՝ դատարան

Ուշագրավ իրավիճակ՝ Արդարադատության նախարարությունում. աշխատակիցներն իրենց արձակուրդի դիմաց տրամադրվող վճարը փորձում են ստանալ դատարանի միջոցով: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Էդգար Հովհաննիսյանը դիմել է Վարչական դատարան՝ պահանջելով, որ դատարանը ստիպի նախարարությանը հօգուտ իրեն վճարել 1.081.546,46 ՀՀ դրամ, որից՝540.773,228 ՀՀ դրամը՝որպես չտրամադրված արձակուրդի վճար, իսկ 540.773,228 ՀՀ դրամը՝ որպես չտրամադրված արձակուրդի նկատմամբ հաշվարկված տույժ բռնագանձելու վճար:

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

Մեզ հայտնի դարձավ, որ Ռոման Դավթյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա 2020թ. հունիսից մինչեւ 2021 հոկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում մեկ միասնական դիտավորությամբ, խարդախությամբ՝ խաբեության եւ վստահությունը չարաշահելու եղանակով, կատարել է թվով 4 անձանց՝ուրիշի գույքի խոշոր չափերի հափշտակություն:

Բացի այդ, թաքցնելով իր իրական ինքնությունը, ներկայանալով այլ անձի անվան տակ՝ 2020թ. հուլիսին հավաքել եւ պահել է մարդու անձնական գաղտնիք համարվող տեղեկություններ, առանց նրա համաձայնության, որոնք նախատեսված չեն եղել օրենքով:

Բացի այդ, Ռոման Դավթյանն անձնական տվյալներ հավաքելու արդյունքում իր մոտ ստացված եւ պահվող իգական սեռի անձի մերկ պատկերով տեսագրությունը հրապարակելու սպառնալիքով անզգուշությամբ 2021թ. փետրվարի 21-ին այդ անձին հասցրել է ինքնասպանության փորձի:

ՉԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ

ԾՆՈՂՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Պաշտպանության նախարարության շենքի մոտ երեկ հավաքվել էին զոհված զինծառայողների ծնողները, որոնք շուրջ յոթ ժամ սպասեցին, բայց այդպես էլ չկարողացան հանդիպել նախարար Սուրեն Պապիկյանի հետ:

Ծնողները մեկ պահանջ ունեին ընդամենը եւ ուզում էին հասկանալ, թե ինչ հանգամանքներում են զոհվել իրենց զավակները:

«Հերոսաձին ծնողներով հավաքվել ենք այստեղ, որոնցից ամեն մեկը հայրենիքի համար տվել է իր որդուն: Այսօր եթե նախարարը չի ընդունում մեզ, ապա ո՞ւմ է ընդունելու», - լրագրողների հետ զրույցում նշեց նրանցից մեկը:

Որդեկորույս ծնողները վերջին անգամ հուլիսի 29-ին էին նույն պահանջով եկել նախարարություն: Մի քանի ժամ սպասելուց հետո նրանց ընդունել էր նախարարությունից մի պաշտոնյա, խոստացել 3 օրվա ընթացքում առերեսում կազմակերպել իրենց որդիների անմիջական հրամանատար Պավլիկ Քյարամյանի հետ: Հանդիպումից արդեն 13 օր է անցել, բայց ծնողները պաշտպանական գերատեսչությունից որեւէ արձագանք չունեն:

Երեկ՝ մի քանի ժամ սպասելուց հետո, մեկ այլ պաշտոնյա իջավ՝ ծնողներին փոխանցելու, որ նախորդ հանդիպմանը ձեռք բերված պայմանավորվածությունն անհնար է կատարել, քանի որ ՊՆ-ն առերեսում կազմակերպելու իրավունք չունի: Այս ընթացքում մի քանի անգամ իրավիճակը լարվեց, երբ ծնողները փորձեցին մտնել նախարարության ընդունարան եւ այնտեղ սպասել նախարարին:

44-օրյա պատերազմի ժամանակ Մարտակերտում ծառայող զինվորները պատերազմի 27-րդ օրն էին տեղափոխվել Մարտունի՝ Ուրյան բարձունքը պաշտպանելու: Պնդում են՝ դիրքերում իրենց որդիները մնացել են առանց հրամանատարի բաց երկնքի տակ անորոշ ու փակուղային իրավիճակում, ինչի հետեւանքով 34 զինծառայողները զոհվել են:

11-րդ վաշտի ժամկետային զինծառայող Ժորա Սահակյանի հայրը՝ Վահիդ Սահակյանը, ասում է՝ իրենց զայրացրել է հատկապես այն, որ գումարտակի հրամանատար Պավլիկ Քյարամյանն առաջին աստիճանի «Մարտական խաչ» է ստացել այն դեպքում, երբ Քննչական կոմիտեում քրեական գործ կա հարուցված իրենց զավակների մահվան փաստով: Մինչեւ օրս, սակայն, քրեական գործով մեղադրյալ չկա, միայն մի քանի անգամ կողմերն են հարցաքննվել. «Ինքը պարտավոր էր որպես հրամանատար իր պարտականությունները կատարել, որը չի կատարել: Չեմ ասում՝ թերի է կատարել, այլ չի կատարել, ավելի ապահով տեղ է եղել, քան մեր տղաներն են եղել»:

Երեկ 5-րդ անգամն էր, որ ծնողները հավաքվել էին Պաշտպանության նախարարության մոտ: Նրանցից միայն երկուսին օրվա վերջում՝ ժամեր շարունակ սպասեցնելուց հետո, ընդունել է նախարարի օգնականը եւ ասել, թե առաջակայում կտեղեկացնեն նախարարի հետ հնարավոր հանդիպման մասին:

Ն. Հ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԷՐԴՈՂԱՆՆ ՈՒ ԱԼԻԵՎԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հանդիպել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ, որը ժամանել է Քոնիա՝ մասնակցելու Իսլամական համերաշխության 5-րդ խաղերի բացման արարողությանը: Հանդիպումն անցկացվել է մամուլի համար փակ դռների հետեւում. հայտնում են ադրբեջանական լրատվամիջոցները: Էրդողանը հերթական անգամ հայտնել է Թուրքիայի կողմից աջակցության մասին՝ կապված Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած վերջին իրադարձությունների հետ: Ալիեւը շնորհակալություն է հայտնել աջակցության համար:

ՕՐԵՆՔՈՎ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

Փողոցների երթեւեկելի մասում, ավտոկայանատեղերի հատվածում տնտեսվարողները հաճախ տեղադրում են տարբեր կանգնակներ, ինչն օրենքով արգելվում է: Իրավախախտները նախազգուշացվում են, տուգանվում, իսկ կանգնակները՝ հեռացվում: Քաղաքապետարանը հորդորում է տնտեսվարողներին չխախտել օրենքն ու զերծ մնալ կանգնակներ տեղադրելուց:

ԿՋՈՐԱՑՐՎԵՆ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանն ստորագրել է հրամանագիր 2022 թվականի օգոստոսի 3-ին հայտարարված մասնակի զորահավաքի շրջանակներում զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների զորացրում կատարելու մասին:

«ՁԵՎ 5» ՎԿԱՅԱԿԱՆԸ

ՀՀ սննդամթերքի եւ ՀՀ ոստիկանության վերահսկողությամբ մեկնարկել է ուժեղացված գործընթաց՝ անասնահամաճարակային մշտադիտարկում կենդանիների մորթից գոյացած մթերքի կամ կենդանական ծագման հումքի մատակարարման նկատմամբ, որի ընթացքում Երեւան քաղաք մտնող մայրուղիներում զննվել են միս տեղափոխող փոխադրամիջոցները:

ՍԱՏՄ-ից տեղեկացնում են, որ կանգնեցված եւ ստուգված բազմաթիվ փոխադրամիջոցներից 19-ում հայտնաբերվել է միս-մսեղիք, որոնցից միայն 3-ն են ունեցել սպանդանոցային մորթը փաստող անասնաբուժական «Ձեւ 5» վկայականը:

ՀԱՐՈՒՑԵԼ Է ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովն արտասահմանից ՀՀ առաքման ծառայություններ մատուցող «Գլոբալ Շիփփինգ» ՍՊԸ-ի (Globbing), «Օնէքս» ՍՊԸ-ի (ONEX) եւ «Հայփոստ» ՓԲԸ-ի (Ber-Ber ծառայություն) նկատմամբ հարուցել է վարույթներ առերեւույթ հասարակության մոլորեցման դրսեւորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներով: Վարույթները հարուցվել են այն առերեւույթ հիմքով, որ գործնականում հիշյալ ընկերությունների կողմից իրականացված առաքումների ժամկետները գերազանցել են հայտարարված ժամկետները:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԿՐԱԿՈՑԻ ՁԱՅՆԵՐ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնում, ինչպես նաեւ ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներում պարզվել են խուլիգանության, ոստիկանության աշխատակիցների օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու, հրազեն ձեռք բերելու, պահելու, փոխադրելու, կրելու դեմքի՝ էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ ենթադրյալ հանցագործություն կատարած անձանցից երկուսի ինքնությունը:

Քննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն՝ օգոստոսի 5-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, ՀՀ ոստիկանության ՊԾ ԵԶԳ պարեկները Երեւան քաղաքի Ավան վարչական շրջանի Աճառյան փողոցում ծառայություն իրականացնելիս լսել են կրակոցի ձայներ, որից հետո նկատել են նշված փողոցով մեծ արագությամբ սլացող «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենա եւ մեքենայի կողմից կրկին լսել են կրակոցի ձայներ: Հասկանալով, որ կրակոցները հնչել են հենց այդ ավտոմեքենայից, ոստիկանության ծառայողները հետեւել են եւ հասնելով Առինջ գյուղի մոտ՝ նկատել են նշված ավտոմեքենան՝ շրջապատված շուրջ 10-15 երիտասարդներով: Մոտենալով վերջիններիս՝ պարեկները նրանցից պահանջել են ավտոմեքենայի վարորդի մասին տվյալներ հայտնել, սակայն չենթարկվելով ոստիկանների օրինական պահանջին՝ երիտասարդները հրել եւ հարվածներ են հասցրել ոստիկաններին, հայհոյել են եւ թույլ չտալով նստել ծառայողական ավտոմեքենան՝ վնասել են այն. միայն օգնության հասած կարգախմբի հետ միասին է հնարավոր եղել զսպել խմբի գործողությունները:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 452-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի, 335-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ: Երկու պարեկները ճանաչվել են տուժող: Իրականացված միջոցառումների արդյունքում պարզվել է միջադեպին մասնակից անձանցից երկուսի ինքնությունը, որոնք Առինջ գյուղի բնակիչներ են՝ 28 եւ 32 տարեկան: Նախաքննության ընթացքում տվյալներ են ստացվել այն մասին, որ կրակոցները կատարվել են նշված «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի սրահից, որը պատկանում է ձերբակալվածներից մեկին՝ 28-ամյա երիտասարդի: Փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, եւ այն միացվել է վերոհիշյալ քրեական վարույթին, որի շրջանակներում կատարված դեպքի վայրի՝ Սեւան-Երեւան մայրուղու «Առինջի կամար» կոչվող հատվածի խաչմերուկի զննությամբ հայտնաբերվել են 9մմ տրամաչափի մեկ տասնյակից ավելի կրակված պարկուճներ եւ կրակված գնդակ, իսկ դեպքի վայրում գտնվող «Եվրոմոթորս» ավտոսրահի դիմային հատվածի ապակիների վրա՝ կրակոցի հետքեր. նշանակվել են դատաբժշկական, դատաձգաբանական փորձաքննություններ, կատարվել են խուզարկություններ:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ 28-ամյա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով, 335-րդ հոդվածի 1-ին մասով եւ 452-րդ հոդվածի 3-րդ մասով, իսկ 32-ամյա տղամարդուն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ 452-րդ հոդվածի 3-րդ մասով: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են: Նախաքննությունը շարունակվում է: Միջոցներ են ձեռնարկվում՝ միջադեպին մասնակից անձանց ինքնությունը, ամբողջական շրջանակը պարզելու, նրանց հայտնաբերելու, յուրաքանչյուրի գործողություններն անհատականացնելու, քրեաիրավական գնահատական տալու, հանցագործության գործիք հանդիսացող հրազենը հայտնաբերելու ուղղությամբ:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է

ԱՌԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Բացահայտվել է վառելիքի խոշոր ներմուծողների կողմից նախօրոք մշակված մեխանիզմների միջոցով հարկվող օբյեկտները թաքցնելու, ինչպես նաեւ առանց համապատասխան փաստաթղթերի վառելիքի մատակարման փորձ:

ՊԵԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից հայտնում են, որ կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության դիտակետում էին հայտնվել Հայաստանի Հանրապետության տարածք բենզինի եւ դիզելային վառելիքի ներմուծումներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտները, որոնց նկատմամբ իրականացված միջոցառումների նախապատրաստական եւ ստուգողական աշխատանքների արդյունքում ստացվել են օպերատիվ տվյալներ այն մասին, որ Իրանի Իսլամական Հանրապետությունից դեպի Հայաստանի Հանրապետության տարածք բենզինի եւ դիզելային վառելիքի խոշոր ներմուծումներ իրականացնող որոշ կազմակերպություններ հարկեր չվճարելու ուղղակի դիտավորությամբ նախօրոք մշակում են մեխանիզմներ եւ փորձում իրացնել դրանք: Իրանական բեռնատարների մի շարք վարորդներ, վառելիքի բաքերում կուտակելով բեռնափոխադրման համար նախատեսված չափերից մի քանի անգամ ավելի դիզելային վառելիք, նախապես ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն, առանց համապատասխան փաստաթղթերի, այն վաճառում են Սյունիքի մարզում գործող բենզինի եւ դիզելային վառելիքի լիցքավորման կայաններին: Լիցքավորման կայաններն էլ, կուտակելով համապատասխան խմբաքանակները, առանց համապատասխան ձեւակերպումների, դրանք վերավաճառել են ՀՀ-ում վառելիքի ներկրումներով զբաղվող խոշոր կազմակերպությունների:

Օպերատիվ տվյալների համաձայն՝ խոշոր ներկրող կազմակերպություններից որոշներն Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծած վառելիքը, առանց համապատասխան փաստաթղթերի, վերավաճառել են Հայաստանի տարածքում, սակայն փաստաթղթերով ձեւակերպել են, որ դրանք տեղափոխել եւ վաճառել են Արցախի Հանրապետությունում գործող կազմակերպություններին: Ձեռնարկված համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում վառելիքի ներմուծումներով եւ վերավաճառքով զբաղվող տնտեսվարող սուբյեկտներից մի քանիսի մոտ արդեն իսկ արձանագրվել են առանց համապատասխան փաստաթղթերի վառելիքի մատակարարումների եւ տեղափոխությունների խախտման դեպքեր: Վերջիններիս նկատմամբ կկիրառվեն համապատասխան պատասխանատվության միջոցներ: ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունը բենզինի եւ դիզելային վառելիքի ներմուծումներ իրականացնող կազմակերպություններին հորդորում է ամբողջությամբ հայտարարագրել հարկման օբյեկտներն ու հարկման բազաները, ինչպես նաեւ դրանց հաշվարկման համար հիմք հանդիսացող սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը եւ պահպանել հարկային կարգապահությունը:

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է ԿԱԼԱՆՔԸ

Դատարանը՝ դատավոր Դավիթ Արղամանյանի գլխավորությամբ, բավարարել է Հակակոռուպցիոն կոմիտեի միջնորդությունը, եւ դատախազ Կորյուն Ներսիսյանի կալանքը եւս երկու ամսով երկարաձգվել է:

Ինչպես հայտնի է, Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ Կորյուն Ներսիսյանը կալանավորվել էր: Դատախազ Կորյուն Ներսիսյանն կաթողիկոս Գարեգին Բ-ի եղբորորդին է, որի քրեական գործով շոշափվում է նաեւ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Էդգար Հովհաննիսյանի եւ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արթուր Ադամյանի անունները:

Հիշեցնենք, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ դատախազության հետ համագործակցությամբ ձեռնարկված մեծածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ Կ.Ն.-ն, հանդիսանալով պաշտոնատար անձ, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող քրեական գործով ամբաստանյալ Ն.Դ.-ի նկատմամբ մեղմ պատիժ նշանակելուն պաշտոնեական դիրքն օգտագործելով նպաստելու համար Գ.Գ.-ի եւ Ն.Ա.-ի օժանդակությամբ եւ միջնորդությամբ Ն.Դ.-ից ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 2.500.000 ՀՀ դրամ կաշառք: Կորյուն Ներսիսյանը չի ընդունում մեղադրանքը:

ԴԻՄՈՒՄ՝ ԴԱՏԱՐԱՆ

Երեւանի քաղաքապետարանի աշխատակիցները մեկը մյուսի հետեւից դիմում են դատարան՝ պահանջելով վերականգնել իրենց նախկին աշխատանքում: Մասնավորապես, Նարինե Սահակյանը դիմել է Վարչական դատարան՝ պահանջելով, որ դատարանը 03.06.2022թ. հրամանն անվավեր ճանաչի, իրենց զբաղեցրած պաշտոնում վերականգնի Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմում, պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձի հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի չափով՝ սկսած 03.06.2022թ. մինչեւ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, հատուցում պարտավորեցնի եւ պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձի իր միջին աշխատավարձի տասներկուսապատիկի չափով գումար՝ որպես աշխատանքում չվերականգնելու դիմաց տրվող հատուցում: Նմանօրինակ հայցով դիմել է նաեւ Լիլիթ Հարությունյանը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 9-ից 10-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել են հանցագործության 58 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԶԻՆՎՈՐԸ ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Բերդ քաղաքի նստավայրում, դատավոր Զոյա Զաքինյանի նախագահությամբ, 2022թ. հուլիսի 19-ից ընթանում է Մարութ Ռադիկի Սարգսյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերից մեկի զինծառայող, 2022թ. մարտի 18-ից ընդգրկված լինելով մարտական հերթապահության զորամասի պահպանության տեղամասի Բիթլիս կոչվող մարտական դիրքում, 2022 թվականի մարտի 21-ին՝ ժամը 02:00-ի սահմաններում, գտնվելով հանգստացող հերթափոխում, օգտվելով համածառայող շարքային զինվորի անօգնական վիճակից՝ մարտական դիրքի կացարանում քնած լինելու հանգամանքից, նրա կամքին հակառակ սեքսուալ բնույթի համասեռական գործողություններ է կատարել: Մ. Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 139 հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել հրամանատարության հսկողությանը հանձնելը:

2 ՀԱ ՏԱՐԱԾՔ՝ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղում թափով ընթանում է ռուսական զինուժի համար զորանոցի շինարարարությունը: Նոյեմբերյան համայնքի ավագանին միաձայն որոշում է ընդունել այդ նպատակով Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերել համայնքին պատկանող 2 հեկտար տարածք: Ոսկեպարի բնակիչները հայտնեցին, որ Ոսկեպարում շինարարությունը ղեկավարում է ռուս սպա, սակայն աշխողեկը Գորիսից է՝ Արգամ անունով: Զորանոցի կառուցմանը մասնակցում են Ոսկեպարի գյուղի 4 բնակիչ, շինարարության մեջ ընդգրկված է նաեւ Նոյեմբերյան խոշորացված համայնքին պատկանող շինարարական մեկ տեխնիկա՝ ամբարձիչ, որն աշխատեցնում է Ոսկեպարի մի բնակիչ: Ոսկեպար գյուղի բնակիչների խոսքերով՝ քիչ թվով ոսկեպարցիներ են այնտեղ աշխատում, որովհետեւ ամռան շոգին զորանոցի շինարարության մեջ աշխատող բանվորներին քիչ չափով են վարձատրում՝ օրական 6 հազար դրամ: Հայտնի չէ, թե շինարարական որ կազմակերպությունն է իրականացնում ռուսական զինուժի զորանոցի կառուցումը, սակայն հայտնի է, որ այդ կազմակերպությունը նման կառույցներ է գործարկել Սյունիքում: Ոսկեպարում զորանոց կառուցվում է հավաքովի շինանյութով, մոդուլային եղանակով: Նման եղանակով ռուսական զինուժի համար զորանոց է կառուցվում նաեւ Բերդ խոշորացված համայնքի սահմանամերձ Այգեպար գյուղում՝ խորհրդային տարիներին Այգեպարում գործած փոքր օդանավակայանի տարածքում: Ոսկեպարում ռուս զինվորականները գտնվում են 2021 թվականի օգոստոսի սկզբից, նրանք չեն հայտնում այդտեղ իրենց տեղակայվելու նպատակը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀՆՈՒՑ ԵԿԱԾ ԽՆԴԻՐ

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ, ԲԱՅՑ ԳՈՐԾ ՉԵՆ ԱՆՈՒՄ

ՀՀ Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերում եվրոպական չափանիշերին համապատասխան սանիտարական աղբավայր կառուցելու իշխանությունների խոստումները դեռ քննակումների մակարդակի են:

Պարբերաբար մի քանի պաշտոնյաներ, այդ թվում՝ մարզպետներ, տարածքային կառավարման եւ ենակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի շուրջ հավաքվում են, ինչ-որ քննարկումներ անում ու վերջ. աղբավայրն այդպես էլ չի կառուցվում:

Այս թեմայի շուրջ վերջին քննարկումն իշխանություններն անցկացրել են օգոստոսի 3-ին. քննարկվել են ծրագրի շրջանակներում մշակված երկու մարզերի բոլոր բնակավայրերի աղբահանության սխեմաները, ծրագրի շրջանակներում ստեղծված «Կոտայքի եւ Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի գործառույթներին, ինչպես նաեւ իրականացվող շինարարությանն առնչվող հարցեր, կարճ ասած՝ շարունակական քննարկումներ եւ ոչ գործնական վիճակ: Այս ծրագիրը բոլոր մարզպետների ձեռքի տակով է անցել. անգամ Գնել Սանոսյանն է մարզպետի կարգավիճակում քննարկել աղբավայր կառուցելու հարցը, բայց՝ անպտուղ:

Իսկ մինչ այդ տեղեկացնենք, որ դեռեւս 2016 թվականին Ֆինանսների նախարարության ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ ստորագրվել էր «Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիրը», որով նախատեսվում է կառուցել եվրոպական չափանիշերին համապատասխան սանիտարական աղբավայր եւ ներդնել աղբահանության արդյունավետ համակարգ: Ավելին՝ ծրագրի ընդհանուր բյուջեն 8,07 մլն եվրոյից հասցվեց 11 մլն-ի, որից 5,5 մլն եվրոն վարկ է՝ 15 տարի մարման ժամկետով, 5,5 մլն եվրոն՝ դրամաշնորհ: Վարկի տոկոսադրույքը լողացող է, արտոնյալ ժամկետը՝ 3 տարի: Բանկը նաեւ 1.600.000 դրամ դրամաշնորհ է հատկացրել խորհրդատվական ծառայությունների համար: Ծրագրի տեւողությունը 3 տարի էր: Ի դեպ, աղբավայրի շինարարական աշխատանքները նախատեսվում էր սկսել 2018 թվականի գարնանը: Եթե ստորագրված այս պայմանագրին նայենք, ապա մենք վաղուց պետք է աղբավայր ունենայինք, այն էլ՝ եվրոպական չափանիշերին համապատասխան:

Իսկ, ահա, նախորդ տարի Գեղարքունիքի մազպետարանից հայտարարեցին, որ այդ շինաշխատանքները պետք է ավարտին հասցնեն 2022 թվականին: Ինչպես տեսնում ենք, շինարարական աշխատանքները ոչ միայն չեն ավարտվել, այլեւ դադարեցված են:

Այնուամենայնիվ, ArmLur.am-ը դիմեց Կոտայքի մարզպետ Արտավազդ Սահակյանին եւ հետաքրքրվեց, թե մինչեւ երբ են շարունակվելու այդ քննարկումները, եւ ինչու են ձգձգվում այդ շինաշխատանքները: «Մի փոքր խնդիրներ ի հայտ եկան՝ կավի հետ կապված. կավի պաշարները տեղում վերջացան, հիմա այլ տեղից են տեղափոխում, հետաձգվեց մի փոքր, ժամկետ տրվեց, ժամկետներ ավելացվեցին: Նոյեմբերին կավարտեն շինարարական աշխատանքները»,- տեղեկացրեց Կոտայքի մազպետը:

Մեր զրուցակցի խոսքով՝ նոյեմբերին՝ շինաշխատանքներն ավարտին հասցնելուց հետո, համայնքները բաժնետեր են դառնալու մի ընկերությունում եւ միասին համատեղ կսկսեն շահագործել այդ աղբավայրը: «Արդյունքում կոնկրետ մեր մարզում 23-24 աղբավայր կփակվի, կդառնա մեկ հավաքատեղի, Աբովյանի աղբավայրը, հիմա որ գործում է, այդտեղից աղբը կտեղափոխվի Հրազդանի տարածք, նույն գործընթացը Գեղարքունիքում պետք է լինի»,- լրացրեց մազպետը:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ

Հայաստանում այս տարվա առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, շինարարության ծավալները աճել են 12.7 տոկոսով:

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ կատարվել է, ընթացիկ գներով, ընդհանուր առմամբ 149 միլիարդ 030.6 միլիոն դրամի շինարարություն, ընդ որում՝ պետական բյուջեի միջոցներից կատարվել է 37 միլիարդ 446.6 միլիոն դրամի շինարարություն (աճը՝ 1.8 տոկոս), համայնքների միջոցների հաշվին՝ 5 միլիարդ 510.8 միլիոն դրամի (աճը՝ 92.6 տոկոս), մարդասիրական օգնության միջոցներով՝ 1 միլիարդ 476.5 միլիոն դրամի (աճը՝ 79.8 տոկոս), կազմակերպությունների միջոցներով՝ 69 միլիարդ 062.6 միլիոն (աճը՝ 27.2 տոկոս), բնակչության միջոցներով՝ 35 միլիարդ 534.1 միլիոն դրամի. վերջին ցուցանիշը նվազել է 5.1 տոկոսով:

Ըստ Կադաստրի կոմիտեից, համայնքներից, համատիրություններից, լիազորագրային ու հավատարմագրային կառավարիչներից եւ այլ իրավաբանական անձանցից ստացված հաշվետվությունների ամփոփ տվյալների՝ 2021 թվականի վերջին բնակարանային ֆոնդում հաշվառվել է 19 հազար 256 բազմաբնակարան շենք՝ 448 հազար 938 բնակարաններով, 422 հազար 217 առանձնատուն, հանրակացարանային ֆոնդի եւ ժամանակավոր բնակելի տարածքի ընդհանուր մակերեսը եղել է 264 հազար 047 քմ:

Այս տարվա առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ կատարվել է 96 հազար 535 գործարք, որից 37 հազար 322-ը՝ օտարում, 5 հազար 093-ը՝ վարձակալություն, 12 հազար 487-ը գրավադրում, 18 հազար 624-ը՝ ժառանգություն, 13 հազար 281-ը՝ առաջնային գրանցում, եւ այլ տիպի գործարքներ: Ընդհանուր գործարքներից 26 հազար 964-ը վերաբերել են բնակարաններին, 20 հազար 418-ը բնակելի տներին, 36 հազար 326-ը՝ հողերին, որից գյուղատնտեսական նշանակության՝ 22 հազար 182-ը:

Ի դեպ, Հայաստանի գյուղական բնակավայրերում կատարվել է անշարժ գույքի օտարման 15 հազար 663 գործարք, մարզերի քաղաքներում՝ 9 հազար 216, իսկ Երեւանում՝ 12 հազար 443:

Անշարժ գույքի առուվաճառքի գործարքներն այս տարվա առաջին կիսամյակում աճել են՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Եթե նախորդ տարի՝ առաջին վեց ամիսներին, եղել էր առքուվաճառքի 24 հազար 961 գործարք, ապա այս տարվա նույն ժամանակահատվածում՝ 27 հազար 192:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 15 ՃՏՊ. 4 մարդ զոհվել է, 18-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է Սուսաննա Էդուարդի Հովսեփյանին եւ Նադեժդա Նիկոլայի Արարատյանին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Ծարավ աղբյուրի փողոց, 12 հասցեում գտնվող 0,076223 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 33700000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 29.08.2022թ.-ին ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2022թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ համապատասխան գույքի աճուրդի ավարտին նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

ՇԵՆԳԵՆՅԱՆ ՎԻԶԱ

ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շենգենյան վիզա. այսպես է ընդունված կոչել այն վիզան, որը տրվում է այն պետությունների կողմից եւ այն պետությունների տարածքների համար, որոնք անդամակցում են «Միասնական սահմաններին իրականացվող վերահսկողությունը քայլ առ քայլ վերացնելու մասին» 1985թ. հունիսի 14-ին ստորագրված համաձայնագրին:

Այս համաձայնագիրը ստորագրվել է լյուքսեմբուրգյան Շենգեն կոչվող փոքրիկ բնակավայրում, այդ պատճառով էլ վիզան կոչում են Շենգենյան: «Ժողովուրդ» օրաթերթը այս մասին տեղեկացավ Հայաստանում Գերմանիայի դեսպանատնից:

Շենգենյան վիզան տալիս է Շենգենյան համաձայնագրի անդամ պետություններում վեց ամսվա ընթացքում առավելագույնը 90 օրվա կացության իրավունք: Այս վիզայով հնարավոր չէ ծավալել աշխատանքային գործունեություն: Ներկայում Շենգենյան գոտու երկրներ են համարվում Բելգիան, Դանիան, Գերմանիան, Էստոնիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Հունաստանը, Իսլանդիան, Իտալիան, Լատվիան, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Մալթան, Նիդերլանդները, Նորվեգիան, Ավստրիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Շվեդիան, Շվեյցարիան, Սլովակիան, Սլովենիան, Իսպանիան, Չեխիան եւ Հունգարիան:

Ուշադրություն. Բուլղարիան, Իռլանդիան, Ռումինիան, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը, ինչպես նաեւ Կիպրոսը Շենգենյան համաձայնագրի անդամ պետություններ չեն:

Գերմանիայի դեսպանությունից ստացած Շենգենյան վիզայով կարող եք այցելել նաեւ Շենգենյան այլ պետություններ: Հենց սա է Շենգենյան վիզայի իմաստը: Դուք կարող եք վիզայի վավերականության ժամկետում այցելել Շենգենյան ցանկացած երկիր, բայց այցելության հիմնական նպատակակետը (ամենաերկար կացությունը) պետք է լինի այն երկրում, որի դեսպանությունից Դուք վիզան ստացել եք:

Պետք է նկատի ունենալ, որ միայն վիզա ունենալը ինքնաբերաբար մուտքի իրավունք չի տալիս, եւ որ վիզա ունեցող անձը սահմանին պետք է փաստաթղթերով հավաստի, որ բավարարում է Շենգենյան սահմանային կոդեքսի 6-րդ հոդվածով նախատեսված մուտքի նախապայմանները:

Եթե ունեք, օրինակ, լեհական D-վիզա, կարող եք այդ վիզայով այցելել Գերմանիայում բնակվող ընկերներին: Համաձայն Եվրոպական խորհրդարանի եւ Եվրոպական խորհրդի՝ 02.03.2010թ. թիվ 265/2010 որոշման՝ D-վիզաները, որոնք տրվում են Շենգենյան պետությունների կողմից, 2010թ. ապրիլի 5-ից սկսած՝ համարվում են համաշենգենյան եւ արտոնում են վեց ամսվա ընթացքում առավելագույնը 90 օրվա կացություն:

Շենգենյան վիզայի վավերականությունը կախված է՝

-նշված ժամանակահատվածից,

-կացության օրերի թույլատրված առավելագույնից (օրինակ՝ 30 կամ 90 օր)

-թույլատրված մուտքերի քանակից (մեկ, երկու կամ բազմակի):

Օրինակ՝ Ձեզ տրվել է 30 օր ժամկետով եւ երկու անգամ մուտք գործելու հնարավորությամբ վիզա, ըստ այդմ՝ Դուք կարող եք վավեր ժամկետում երկու անգամ մուտք գործել Շենգենյան տարածք եւ այնտեղ գտնվել ընդհանուր մինչեւ 30 օր: Մուտք գործելու եւ Շենգենյան գոտուց դուրս գալու օրերը հաշվվում են որպես կացության օրեր:

Կացությանը նախորդող ժամանակահատվածների հաշվարկը կատարվում է Շենգենյան տարածք նախատեսված մուտքի ժամանակահատվածից սկսվող հետհաշվարկով: Եթե, օրինակ, մուտքը նախատեսված է 01.07.-ին, կացությանը նախորդող հնարավոր ժամանակահատվածների հաշվարկում դիտարկվում են վերջին 6 ամիսները (հունվար- հունիս), եւ հաշվի են առնվում համապատասխան կացությունները: Հաշվարկներին առնչվող հարցերի դեպքում Դուք կարող եք ցանկացած ժամանակ դիմել վիզայի բաժին:

Հարկ է նկատի ունենալ, որ մեկ տարի (2, 3 կամ 5 տարի) վավերականությամբ տրվող Շենգենյան վիզաները թույլ են տալիս Գերմանիայում կամ Շենգենյան գոտու անդամ որեւէ այլ պետությունում գտնվել վեց ամսվա մեջ առավելագույնը 90 օր:

Ն.Հ.

ԱՐԴԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն աշխատանքային այցով եղավ Վարդենիսի բժշկական կենտրոնում:

Մարզպետը բժշկական կենտրոնի հիվանդանոցային եւ պոլիկլինիկական ծառայություններ մատուցող մասնաշենքերում ծանոթացավ աշխատանքային պայմաններին, վերջին մեկ տարվա տեխնիկական վերազինումներին եւ նորոգման աշխատանքներին, շրջեց բաժանմունքներում, հիվանդասենյակներում, զրուցեց բուժանձնակազմի հետ: Ինչպես ներկայացրեց Վարդենիսի բժշկական կենտրոնի տնօրեն Շահեն Շահինյանը, վերջին տարիների ընթացքում Վարդենիսի հիվանդանոցում բարելավվել են վիրաբուժական, գինեկոլոգիական, ռենտգեն հետազոտության, պոլիկլինիկայում՝ ակնաբուժական ծառայությունները: Տարբեր բարեգործական ծրագրերի միջոցով կամ տնտեսված միջոցների հաշվին որոշակիորեն բարելավվել են նաեւ շենքային ու աշխատանքային պայմանները, սակայն որակյալ բուժծառայությունների մատուցման համար արդեն միավորված բուժհաստատությունը պետք է արմատապես վերազինվի նորագույն բուժսարքավորումներով, ունենա շենքային բարձրակարգ պայմաններ, համալրվի որակյալ բժիշկ մասնագետներով, նեղ մասնագիտական նոր ծառայություններով:

Ամփոփելով աշխատանքային այցի արդյունքները՝ մարզպետ Կարեն Սարգսյանը հավաստիացրեց բուժանձնակազմին, որ շատ շուտով կարգավորվեն բոլոր խնդիրները, երբ Վարդենիսը պետական հոգածությամբ կունենա արդի չափորոշիչներին համապատասխան բժշկական կենտրոն՝ հագեցած բժշկական նորագույն սարքավորումներով, շենքային պայմաններով եւ որակյալ բժիշկներով:

«Այժմ փորձաքննություն է ընթանում Վարդենիսի հիվանդանոցի սեյսմակայունության վիճակի շուրջ: Եթե փորձաքննությամբ հաստատվի, որ շենքն ունի բավարար սեյսմակայունության, ապա մենք կանգ կառնենք հիվանդանոցի կապիտալ նորոգման եւ վերազինման տարբերակի վրա, իսկ եթե պարզվի, որ շենքի սեյսմակայունությունը չի բավարարում, ուրեմն կձեռնարկի նոր շենքի կառուցումը նույն հիվանդանոցի տարածքում, որը կունենա բուժծառայությունների մատուցման ամենաժամանակակից պայմանները»,- ասաց մարզպետ Կարեն Սարգսյանը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԽՈՍՈՒՄ ԵՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց ցեղասպանության ականատեսների ժառանգ ֆրանսահայ լուսանկարիչ Անտուան Ագուջյանը տարիներ շարունակ տեսախցիկի միջոցով աշխարհին է ներկայացնում Հայաստանն ու հայերի ժառանգությունը: Լուսանկարիչն անդրադառնում է ոչ միայն Հայաստանին, այլեւ այն երկրներին, որոնք այս կամ այլ ժամանակահատվածում անմիջական կապ են ունեցել հայերի հետ: Անտուան Ագուջյանի լուսանկարներում մարդու տառապանքն է, ցավը, սերն ու հավատն առ Աստված: Ինքը՝ հեղինակը, խոստովանում է, որ իր աշխատանքները դյուրամարս չեն, սակայն յուրաքանչյուր լուսանկարում կա լույս, քանի որ հայերն էությամբ ուրախ ժողովուրդ են:

Անտուան Ագուջյանը պատմել է լուսանկարչության կարեւորության, 1988 թվականի երկրաշարժի, արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում կատարած աշխատանքի, ինչպես նաեւ «Լռության ճիչը. հայ հիշողության հետքերը» խորագրով ցուցահանդեսի մասին, որն ընդգրկում է հեղինակի 30-ամյա որոնումները եւ հետագծում է հայկական հիշողությունը, որն Ագուջյանը ժառանգել է Հայոց ցեղասպանությունից փրկված ծնողներից:

Անտուան Ագուջյանը մեծ ցնցում է ապրել նաեւ 1988 թվականին՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժի օրերին: «Այդ ժամանակ մենք դիտում էինք «Արմենպրես»-ի ֆոտոթղթակից Մխիթար Խաչատրյանի լուսանկարները դեպքի վայրից: Շատ էմոցիոնալ վիճակում էինք, երբ Շառլ Ազնավուրը եկավ Հայաստան՝ օգնություն ցույց տալու: Մենք եւս ուզում էինք ինչ-որ կերպ աջակցել: Ժամանեցի Հայաստան եւ մեկ տարի մնացի այստեղ: Հենց այդ շրջանում սկսեցի զբաղվել լուսանկարչությամբ, բայց՝ սիրողական: Լուսանկարում էի արտասահմանյան կազմակերպությունների համար: Երբ վերադարձա Ֆրանսիա, իմ աշխատանքների հիման վրա գիրք-ալբոմ հրատարակվեց: Այդպես սկսվեց իմ պատմությունը»,- ասում է լուսանկարիչը:

Հենց այդ շրջանում է Ագուջյանը որոշել լուսանկարչության միջոցով աշխարհին պատմել հայերի, հայերի ժառանգության մասին: 2000 թվականից սկսել է գնալ տարբեր երկրներ, որոնցում հնարավոր է եղել հայկական հետք գտնել: Եղել է Վրաստանում, Լիբանանում, Սիրիայում, Իրաքում, Իրանում, Իսրայելում, Թուրքիայում: Լուսանկարել է պատերազմներ, հակամարտություններ եւ իր աշխատանքները վաճառել է միջազգային լրատվականներին: Ասում է՝ միշտ հետեւել ու լսել է փոքրիկ ուրվականներին՝ Ցեղասպանությունը վերապրածներին, որոնք իր հետ են: Ագուջյանը լուսանկարչությունը համեմատում է լեռ բարձրանալու գործընթացի հետ. կամ պետք է մինչեւ վերջ բարձրանալ, կամ իջնել: Ինքը որոշել է մինչեւ վերջ բարձրանալ ու ստեղծել իր յուրահատուկ աշխարհը:

«Շատ եմ պատմություն կարդացել, որովհետեւ այն վայրերը, ուր պետք է գնայի, կապ ունեին մեր պատմության հետ: Այդպես հասունացա ու այժմ կարող եմ ազատ խոսել»,-նշում է լուսանկարիչը, որն իր հայրենակիցների կողքին է եղել նաեւ արցախյան 44-օրյա պատերազմի օրերին:

Նա ցանկանում է ավելի հաճախ լինել Հայաստանում, շատ աշխատել. լուսանկարչությունից զատ, այլ բանով զբաղվել չի ուզում: Խոստովանում է՝ լավ է իրեն զգում հայ ժողովրդի հետ: Մտադիր է «Լռության ճիչը. հայ հիշողության հետքերը» ցուցահանդեսը, որը հունիսին ներկայացրեց Երեւանում, ցուցադրել նաեւ Արցախում: «Շատ նպատակներ ունեմ ու պետք է շարունակեմ հետաքրքիր լուսանկարներ անել: Եթե հարյուր տարի անց հայազգի կամ օտարերկրացի պատմաբանները, սոցիոլոգները ցանկանան հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել հարյուր տարի առաջ, հնարավոր է՝ նաեւ իմ լուսանկարներից եւս օգտվեն»,- նշում է Անտուան Ագուջյանը:

Նա վստահեցնում է, որ շարունակելու է լուսանկարել այնքան, քանի դեռ հնարավորություններ կան դա անելու, քանի դեռ ուժերը ներում են:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԵԾ ՀԱՄԵՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՕՐԵՐ՝ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Գյումրիում օգոստոսի 26-ին եւ 27-ին Երեւանի օրեր են: Երկու օր շարունակ Հայաստանի մշակութային մայրաքաղաքի շնչին կմիախառնվի Երեւանյան շունչը, իսկ մինչ այդ՝ այս պահին, Երեւանում մշակութառաս եռուզեռ է՝ նախապատրաստություն, փորձեր ու լրամշակվող նախագծեր: Երեւանյան օրերի ընթացքում Գյումրիում սպասվում է աննախադեպ համերգային ծրագիր: Վարդանանց հրապարակում կկայանա ««Սիմֆոնիկ» «Ռեինկարնացիա»» մեծ համերգը: Թե ինչպիսին կլինի երաժշտական տարբեր նախապատվություններ ունեցող երկու խմբերի միաձուլումը, կազմակերպիչները փակագծերը չեն բացում, բայց վստահեցնում են՝ տոնի մասնակիցները ջերմության ու զգացմունքների պակաս հաստատ չեն ունենա:

«Մեծ ծավալի միջոցառում է, որը ցույց կտա սիմֆոնիկ նվագախմբի հնարավորությունները եւ «Ռեինկարնացիա» խմբի շատ սիրված համերգացանկը: Մեծ սիրով հրավիրում եմ մեր շատ սպասված համերգին. կարծում եմ, որ շատ լավ առիթ է, որ մարդիկ գան Գյումրի, լսեն երաժշտություն: Երաժշտությունը կարող է մարդկանց միավորել եւ դրդել, որ գան: Մեծ սիրով բոլորին սպասում ենք»,- նկատում է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հիմնադիր-ղեկավար Սերգեյ Սմբատյանը: «Սա 20 տարվա քրտնաջան աշխատանք է, պարտավորեցնող է: Բոլորին՝ թե՛ Երեւանից, թե՛ մարզերից, հրավիրում եմ Գյումրի: Ինձ համար սա եղել է տարիների երազանք, եւ ես համոզված եմ, որ շատերին դուր է գալու»,- վստահեցնում է «Ռեինկարնացիա» խմբի հիմնադիր Ռոլանդ Գասպարյանը:

Էրեբունի-Երեւանից՝ Գյումրի. ծրագիրը հագեցած է, երգացանկը՝ սիրված:

Մշակութային ապակենտրոնացումն այս անգամ Գյումրիում է: Արվել է հնարավոր ամեն ինչ, որ Երեւանի օրերն առանձնանան ինքնատիպ ու հետաքրքիր ծրագրերով:

«Ակնկալում ենք հյուրեր ամբողջ աշխարհից, որ գան, լավ օրեր անցկացնեն, տեսնեն մեր տեսարժան վայրերը, մշակույթը, նիստ ու կացը, վայելեն գյումրեցու աղուհացը: Սիրով հրավիրում ենք բոլորին ներկա գտնվելու բացառիկ միջոցառմանը, որից, վստահ եմ, այնպիսի տպավորություններով կհեռանան, որպիսիք երբեք ոչ մի տեղ չեն զգացել»,- նշում է Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանը:

ԼՈՒՐԵՐ

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի լողի հավաքականն օգոստոսի 11-21-ը Հռոմում մասնակցելու է ջրային մարզաձեւերի Եվրոպայի առաջնությանը: Օգոստոսի 9-ին թիմը 4 լողորդով մեկնել է մրցավայր: Տղամարդկանց պայքարում հանդես են գալու Արթուր Բարսեղյանը (50, 100 մ ազատ ոճ, 50, 100 մ բաթերֆլայ) եւ Վլադիմիր Մամիկոնյանը (50, 100 մ ազատ ոճ):

Կանանց պայքարում Հայաստանը կներկայացնեն Վարսենիկ Մանուչարյանը (50, 100 մ բաթերֆլայ, 50 մ ազատ ոճ, 50 մ բրաս) եւ Անի Պողոսյանը (50, 100, 200 մ ազատ ոճ): Հայաստանը հանդես է գալու նաեւ թիմային խառը 4x100 մ ազատ ոճում: Թիմը հանդես կգա Արման Վահանյանի գլխավորությամբ:

Նախքան Եվրոպայի առաջնության մեկնելը Արթուր Բարսեղյանը Ռուսաստանի Սանկտ Պետերբուրգ քաղաքում օրերս մասնակցել է բանակայինների աշխարհի խաղերի լողի մրցումներին եւ ոսկե մեդալ նվաճել: Բարսեղյանն առաջին տեղն է զբաղեցրել 100 մ բաթերֆլայ ոճում՝ մրցատարածությունը հաղթահարելով 55.09 վայրկյանում:

ՖԼԵՅ-ՕՖՖ ՓՈՒԼՈՒՄ

Երեւանի «Փյունիկը» հանդես կգա Եվրոպա Լիգայի խաղարկության փլեյ-օֆֆ փուլում: Այս մասին հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը:

«Փյունիկ»-ը, իր պատմության ընթացքում առաջին անգամ դուրս գալով Չեմպիոնների Լիգայի խաղարկության որակավորման 3-րդ փուլ, երկու հանդիպումների արդյունքով (0:2, 0:5) զիջեց Սերբիայի չեմպիոն «Ցրվենա Զվեզդային» եւ ավարտեց իր ելույթները եվրոպական ֆուտբոլի ամենահեղինակավոր մրցաշարում: «Փյունիկը» հանդես կգա Եվրոպա Լիգայի խաղարկության փլեյ-օֆֆ փուլում, որտեղ հայկական թիմի մրցակիցը կլինի Մոլդովայի չեմպիոն Տիրասպոլի «Շերիֆը»: Վերջինս Չեմպիոնների Լիգայի որակավորման 3-րդ փուլում երկու հանդիպումներում (1:2, 1:2) զիջեց Չեխիայի չեմպիոն Պլզենի «Վիկտորիային»: «Փյունիկ» - «Շերիֆ» դիմակայության առաջին հանդիպումը կկայանա օգոստոսի 18-ին Երեւանում, պատասխան խաղը՝ օգոստոսի 25-ին, Մոլդովայում:

4 ՄԵԴԱԼ՝ ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Օգոստոսի 1-9-ը Ֆրանսիայի Շատոռու քաղաքում տեղի ունեցավ Գնդակային հրաձգություն սպորտաձեւի 2022 թվականի 10մ, վազող թիրախ մրցաձեւի Աշխարհի առաջնությունը: Հայ հրաձիգներն ընդհանուր հաշվով նվաճեցին 4 մեդալ.

- մեծահասակներ՝ Լիլիթ Մկրտչյան՝ 3-րդ տեղ, Արուսյակ Գրիգորյան՝ 3-րդ տեղ,
- երիտասարդներ՝ Գոռ Խաչատրյան՝ 1-ին տեղ, Գոհար Հարությունյան՝ 3-րդ տեղ:

Թիմին ուղեկցեց ՀՀՖ գլխավոր քարտուղար Արեգ Սարիբեկյանը:

● *Օգոստոսի 20-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա ««Անտիկվար» Լեռնիկը» թատերական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում որդեգրումը, ո՞վ կարող է լինել որդեգրող, ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ որդեգրման պետական գրանցման համար, ի՞նչ ժամկետում է կատարվում որդեգրման պետական գրանցումը, որքա՞ն է կազմում պետական տուրքի դրույքաչափը:

Վարդուհի Մինասյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Որդեգրում (դստերագրում) (այսուհետ՝ որդեգրումը) թույլատրվում է միայն մինչեւ 18 տարեկան անձանց նկատմամբ եւ ելնելով նրանց շահերից՝հաշվի առնելով երեխաների լիարժեք ֆիզիկական, հոգեկան, հոգեւոր եւ բարոյական զարգացումն ապահովելու հնարավորությունները: Որդեգրումը հաստատվում է դատարանի կողմից, եւ դատարանի վճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո որդեգրումը ենթակա է պարտադիր պետական գրանցման ՔԿԱԳ տարածքային մարմնում: Որդեգրողներ կարող են լինել չափահաս անձինք՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Որդեգրման պետական գրանցումն իրականացնելու համար անհրաժեշտ է որդեգրողների /որդեգրողի/ կամ նրանց կողմից լիազորված անձի գրավոր դիմումը (դիմումի ձեւանմուշը կարող եք ձեռք բերել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կայքից՝ www.moj.am հասցեով, կամ ՔԿԱԳ մարմնից), որդեգրման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը, որդեգրողների /որդեգրողի/ անձը հաստատող փաստաթղթերը, որդեգրողների ամուսնության վկայականը, որդեգրվողի ծննդյան վկայականը

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող լիցենզիաների գործողության ժամկետը երկարաձգելու դեպքում լիցենզիայի տրման համար սահմանված տուրքը շարունակում է վճարվել սույն օրենքով սահմանված կարգով եւ չափերով: Լիցենզիայի գործողության ժամկետը ոչ լրիվ տարով երկարաձգելու դեպքում լիցենզիայի տրման համար սահմանված տարեկան պետական տուրքը հաշվարկվում եւ գանձվում է՝ հաշվի առնելով լիցենզիայի գործողության ժամկետի ոչ լրիվ տարվա ամիսների թիվը:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ ժամկետում պետք է նշանակվի կենսաթոշակը:

Նառա Մկրտչյան (62 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, դիմումն ընդունելուց հետո՝տասը աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները, կայացնում է հետեւյալ որոշումներից մեկը՝

1. նշանակել կենսաթոշակ,
2. նշանակել կենսաթոշակ եւ տեղեկացնել կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին,
3. մերժել կենսաթոշակ նշանակելը:

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 63 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ: Սույն մասով սահմանված 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժում սույն օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ժամանակահատվածները չեն հաշվառվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Տեղի է ունեցել խոշոր ու շղթայական ավտովթար: Երեւանի բնակիչ Ջանիբեկ Մելոյանը իր վարած «ԶԻԼ» մակնիշի ավտոմեքենայով բախվել է 3 Mercedes, 2 Opel, Hyundai Elantra, Doge, Ford Transit, «ՎԱԶ 2107» մակնիշի ավտոմեքենաներին:

Վթարի հետեւանքով տուժածներ չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.08.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: